ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 13 մարտի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի փետրվարի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Զարգացման քաղաքականության երրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 02.03.2012թ. ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Ստացող) եւ Միջազգային զարգացման ընկերակցության (այսուհետ՝ Ընկերակցություն) միջեւ «Զարգացման քաղաքականության երրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2012թ. փետրվարի 15-ին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից:

Ստացողի եւ Ընկերակցության միջեւ 2009թ. հուլիսի 7-ին եւ 2011թ. հունվարի 26-ին ստորագրված՝ Զարգացման քաղաքականության առաջին եւ երկրորդ ծրագրերի ֆինանսավորման համաձայնագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործերով համապատասխանաբար ընդունվել են ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-819 եւ ՍԴՈ-950 որոշումները:

2. Համաձայնագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետությունում աղքատության կայուն կրճատումը:

Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից եւ 6 հոդվածներից, ինչպես նաեւ երկու Լրացումներից եւ մեկ Հավելվածից:

Համաձայնագրում ամրագրված են դրա ընդհանուր պայմանները (սահմանումները), Ծրագրին առնչվող դրույթներ, Ծրագրի ֆինանսավորման կարգը եւ պայմանները, Ստացողի ֆինանսական բնույթի մի շարք պարտավորությունները, Ընկերակցության իրավական պաշտպանության միջոցները եւ այլ դրույթներ:

Սահմանված է, որ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վավերացման ներքին ընթացակարգերն ավարտվելուց հետո, բայց ոչ ուշ, քան ստորագրման ամսաթվին հաջորդող 90-րդ օրը: Միաժամանակ, նախատեսված են Համաձայնագրի ուժի մեջ մտնելու լրացուցիչ այլ պայմաններ:

Համաձայնագրի առաջին եւ երկրորդ Լրացումները վերաբերում են Ծրագրի գործադրմանն ուղղված գործողություններին, ֆինանսական միջոցների հասանելիությանը, առհանման տրանշը բաց թողնելու պայմաններին եւ վարկի մայր գումարի մարման ժամանակացույցին:

Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.01. բաժնին համապատասխան՝ Ընկերակցությունը Ստացողին տրամադրելու է 32 600 000 Փոխառության հատուկ իրավունքներին համարժեք գումարով վարկ: Վճարման արժույթը դոլարն է:

Ֆինանսավորումը պետք է հատկացվի առհանման մեկ մասնաբաժնով (տրանշով), որից Ստացողը կարող է կատարել համապատասխան ֆինանսավորման առհանումներ:

3. Ըստ Համաձայնագրի՝ Ստացողն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- մարել վարկի մայր գումարը կիսամյակային մուծումներով՝ սկսած 2017թ. հուլիսի 15-ից մինչեւ 2037թ. հունվարի 15-ը: Ընդսմին, վճարվելիք տոկոսային մասնաբաժինն սկսած 2017թ. հուլիսի 15-ից մինչեւ 2027թ. հունվարի 15-ը պետք է կազմի 1,65 տոկոս, իսկ 2027թ. հուլիսի 15-ից մինչեւ 2037թ. հունվարի 15-ը՝ 3,35 տոկոս (Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.07. բաժին եւ երկրորդ Լրացում),

- վճարել տարեկան պարտավորության վճար՝ վարկի գումարի մեկ տոկոսի կեսի չափով՝ ֆինանսավորման չառհանված մնացորդի նկատմամբ,

- վճարել տարեկան սպասարկման վճար՝ մեկ տոկոսի երեք քառորդի չափով՝ վարկի գումարի առհանված մնացորդի նկատմամբ,

- վճարել տարեկան տոկոսավճար՝ մեկ եւ քառորդ տոկոսի չափով՝ վարկի գումարի առհանված մնացորդի նկատմամբ (Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.03., 2.04., 2.05. բաժիններ),

- Ընկերակցության ուսումնասիրությանն ու քննարկմանը ներկայացնել ծրագրի իրականացման առաջընթացի մասին հաշվետվություն այնպիսի մանրամասնությամբ, ինչպես Ընկերակցությունը ողջամիտ կերպով կպահանջի,

- Ընկերակցությանն անհապաղ տեղեկացնել ցանկացած այնպիսի իրավիճակի մասին, որը կարող է էապես բացասաբար ազդել Ծրագրի նպատակների վրա,

- պահպանել սոցիալական ապահովության ցանցերը, կենսաթոշակների եւ սոցիալական գերակա ծախսային ծրագրերը անապահով եւ խոցելի խմբերի համար՝ պահպանելով դրանց մասնաբաժինը 2011թ. բյուջեում,

- չօգտագործել ֆինանսական միջոցները բացառված ծախսերի ֆինանսավորման համար («բացառված ծախս» հասկացության սահմանումը տրված է Համաձայնագրի հավելվածում),

- պահպանել երկու տարվա ընթացքում բոլոր փաստաթղթային արխիվները (պայմանագրեր, պատվերներ, հաշիվ-ապրանքագրեր, ստացականներ եւ այլն), որոնք փաստում են ֆինանսավորման շրջանակում կատարված ծախսերի մասին,

- պատրաստել եւ փակման ամսաթվից (31.12.2012թ.) հետո՝ ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում Ընկերակցությանը ներկայացնել այնպիսի ծավալով կամ մանրամասնությամբ հաշվետվություն, որն Ընկերակցությունը ողջամտորեն կպահանջի ծրագրի իրականացման առնչությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ նկատի ունենալով, որ Համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի պահանջներին, ինչպես նաեւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2012 թվականի փետրվարի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Զարգացման քաղաքականության երրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 մարտի 2012 թվականի
ՍԴՈ- 1012